ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՏՆԱՅՑԵՐ՝ ՏԵՂԱՇԱՐԺՄԱՆ ՀԵՏ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ: PASTINFO.AM

18.07.2015 19:10

Երևանում ներկայումս 27 հանրային պաշտպան է գործում, այդ թվում 4-ը՝ քաղաքացիական գործերով, ևս 28-ը մարզերում են, սակայն նրանցից մի մասը կես հաստիքով են աշխատում:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանի կարծիքով՝ ռեսուրսները քիչ են, քանի որ անընդհատ շատացել են գործերը: Որպես միջանկյալ լուծում՝ նախաձեռնել են անվճար խորհրդատվության օրեր, ինչն իրականացնում են Փաստաբանական դպրոցի ունկնդիրները:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը «Փաստինֆո»-ի թղթակցի հետ զրույցում փաստում է, որ այս որոշումն օգնեց բեռնաթափել հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքը, իսկ անվճար խորհրդատվություն տրամադրվում է բոլոր քաղաքացիներին:

Առաջիկայում մարզերում նախատեսվում է արտագնա խորհրդատվություն կազմակերպել, ներկայումս այդ խորհրդատվությունը կազմակերպվում է 4 մարզերում՝ Արարատում, Լուռիում, Կոտայքում և Շիրակում:
Արարատի մարզի բնակիչները, մարզի բոլոր փաստաբանների կողմից անվճար խորհրդատվություն կարող են ստանալ յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթի օրը: Լուռու մարզում՝ յուրաքանչյուր ամսվա առաջին ուրբաթ օրը, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում՝ յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթ օրը, իսկ Գյումրիում անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվում յուրաքանչյուր աշխատանքային օր:

Ինչպես նշեց Մելանյա Առուստամյանը, նախատեսվում է այս ծրագրի շրջանակն ընդլայնել եւ առաջիկայում մյուս մարզերում ևս կիրականացվի:

Շարունակությունը տես սկզբնաղբյուր կայքում

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })